Արձանագրություն N 2-2
ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/13 ծածկագրով գրասենյակային գույքի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

06.11.2026թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Բարսեղյան
Էդ. Հարությունյան
Ա. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնժողովի անդամ՝ Էդ. Հարությունյան

1. Գնման ընթացակարգի հայտերի ուսումնասիրության մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

1-ին չափաբաժին - Արգավանդ Կահույք» ՍՊԸ

հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

2-րդ չափաբաժին մասով ներկայացված հայտերը համակարգի կողմից մերժվել են՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

3-րդ չափաբաժին - Հակոբյան Մարիամ Գևորգի ԱՁ

- տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է հստակ նշել ուղղահայաց շերտավարագույրի լայնությունը:

4-րդ չափաբաժին - ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ

- ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ
- ներկայացված չէ Հավելված N 1.3-ը և տեխնիկական բնութագիրը

5-րդ չափաբաժին - «ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ

- ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային տորագրությամբ
- ներկայացված Հավելված N 1-ը թերի է լրացված, մասնավորապես լրացված չէ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ):
- ներկայացված չէ Հավելված N 1.3-ը
- տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է հստակ նշել սառնարանի բարձրությունը:

6-րդ և 7-րդ չափաբաժիններ - ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ

- ներկայացված Հավելված N 1-ը թերի է լրացված, մասնավորապես լրացված չէ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները ով իրավունք ունի նշանակելու կամ

ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ):

- ներկայացված չէ Հավելված N 1.3-ը
- 7-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում **առնվազն 12000BTU-ը** անհրաժեշտ է հստակեցնել:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 09.11.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել հրավերով սահմանված կարգով՝ համակարգի միջոցով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:

2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 10.11.2026թ. ժամը 10:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 , դեմ-0:

Հանձնաժողովի Նախագահ՝ _____ Տ. Ղուկասյան

Անդամներ՝ _____ Կ. Բարսեղյան

_____ Ա. Խաչատրյան

_____ Աշ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գ. Հակոբյան